ԱՐԱՄ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՔՈՍՅԱՆԻ

ԾՆՆԴՅԱՆ 65-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

2021 թ. մայիսի 18-ին լրացավ հայտնի արևելագետ, պ.գ.դ., պրոֆեսոր Արամ Քոսյանի ծննդյան 65-ամյակը: Արևելագիտության կարկառուն ներկայացուցիչն ու շնորհալի գիտնականը ծնվել է 1956 թ. մայիսի 18-ին, Երևանում, անվանի բանասեր Վաղարշակ Քոսյանի ընտանիքում: 1977 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետի պատմության և հասարակագիտության բաժինը: Արամ Քոսյանի, որպես գիտնականի, կայացման ճանապարհին կարևորագույն նշանակություն է ունեցել 1981–1982 թթ. նրա ուսանելը ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Սլավոնագիտության և բալկանագիտության ինստիտուտում (գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Վյաչեսլավ Իվանով): Այնուհետև նա աշխատանքի է անցել Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում, որտեղ աշխատում է սկսած 1978 թ.-ից: Ինստիտուտի առաջին տնօրեն, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի նախաձեռնությամբ ստեղծված Սեպագիր քաղաքակրթությունների բաժնում Արամ Քոսյանը ստանձնում է Հայաստանում խեթագիտության զարգացման և այդ ուղղությամբ նոր մասնագետների պատրաստման պատասխանատու և կարևոր գործը:

1994–1995 թթ. Արամ Քոսյանը “W.Fulbright Foundation” դրամաշնորհի շրջանակներում հետազոտություններ է անցկացրել Քլիվլենդի պետական համալսարանում (ԱՄՆ), իսկ 2000–2002 թթ.՝ Գերմանիայի Վյուրցբուրգի համալսարանի Արևելյան բանասիրության ինստիտուտում “Alexander von Humboldt Stiftung”-ի ծրագրով:

Գիտական հետաքրքրություններից զատ՝ Արամ Քոսյանը, ունենալով ղեկավարման և կազմակերպման ձիրք և ունակություններ, զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ՝ 1995–2001 թթ.՝ Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, 2002–2007 թթ. եղել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության և հետբուհական կրթության վարչության պետ, այնուհետև՝ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավար-

ժական համալսարանի Գիտական կենտրոնի տնօրեն: 2011 թվականից նա գլխավորում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի աշխատանքները:

1987 թ. Արամ Քոսյանը ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (ատենախոսության թեմա՝ «Մ.թ.ա. XII–VIII դդ. Փոքր Ասիայի և հարակից շրջանների լուվիական պետությունները»), իսկ 1997 թ.՝ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան (դոկտորական ատենախոսության թեման՝ «Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը»), այնուհետև՝ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի կոչում:

Արամ Քոսյանի անվան հետ է կապված Հայաստանում արևելագիտության կարևորագույն ուղղություններից մեկի՝ խեթագիտության զարգացումը: Անվանի գիտնականի համար զուտ խեթագիտական հարցերից բացի, առաջնային են այն հարցերը, որոնք նպաստում են Հայկական լեռնաշխարհի և հայ ժողովրդի պատմության խնդիրների քննարկմանը՝ խեթական սկզբնաղբյուրների, խեթագիտության ընձեռած հնարավորությունների հիման վրա:

Խոսելով խեթագիտության ներկա փուլի մասին՝ անհնար է պատկերացնել հայկական խեթագիտության զարգացումն առանց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի գործնեության, որտեղ իր կարևոր դերակատարումն ունի բաժնի վարիչ Ա. Քոսյանը: Նրա աշխատանքներն աչքի են ընկնում Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորներին վերաբերող սեպագիր աղբյուրների համակողմանի վերլուծությամբ[1]:

---

[1] *Օրինակ*՝ К изучению склонения в иероглифическом лувийском, ДВ, 1988, 5, с. 181–186: *Էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. XII դարում, ՊԲՀ, 1991, 1, էջ 65–78: Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII–VIII вв. до н.э., Ереван, 1994: Իսուվան (Ծոփքը) մ.թ.ա. XIII–XII դարերում, ՊԲՀ, 1997, 1, էջ 177–192: Խեթական տերությունը և Ախխիյավան (Տրոյական պատերազմը), Երևան, 1997: Հին Առաջավոր Ասիայի և Էգեյան ծովի ավազանի պատմության պարբերացման շուրջ, ՄՄԱԵժ, 1998, XVII, էջ 124–140: Տուն Թորգոմայ, Երևան, 1998: Իսուվան և Գորդիոնը մ.թ.ա. XII–X դարերում, ՊԲՀ, 1998, 3, էջ 117–124: Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999: Ասորեստանը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսին, ՊԲՀ, 1999, 2–3, էջ 222–231: Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ.թ.ա. XV դարում, ՊԲՀ, 2000, 3, էջ 161–174: Նոր նյութեր Խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, ՄՄԱԵժ, 2001, XX, էջ 233–245: Անի-Կամա-*

Դրանք առանձնանում են նաև նորահայտ սկզբնաղբյուրների օգտագործմամբ, Հայկական լեռնաշխարհի երկրների հետ Խաթթիի հարաբերությունների նորովի մեկնաբանություններով: Հատկապես կարևոր է ընդգծել նաև նրա՝ 2004 թ. լույս ընծայած «Հայկական լեռնաշխարհի տեղանունները

խը խեթական դարաշրջանում, ՊԲՀ, 2002, 3, էջ 225–241: Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, ՄՄԱԵԺ, 2003, XXII, էջ 252–264: Խեթական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և Վերին Եփրատի ավազանի պատմական աշխարհագրության խնդիրները, ՄՄԱԵԺ, 2004, XXIII, էջ 472–484: Մուրսիլիս II-ի հայասական արշավանքները, ՊԲՀ, 2004, 2, էջ, 197–204: Հայասայի ասպվածները, ՄՄԱԵԺ, 2005, XXIV, էջ 444–457: Հայասան և Ազզին, Շնորհ ի վերուստ. առասպել, ծես և պատմություն, 2008, էջ 263–291: Arnuwandas I in the East, AJNES, 2006, I, pp. 72–97. On the Ethnic Background of Isuwa, AJNES, 2009, IV/2, pp. 85–97. Towards the Hittite Eastern Periphery, AJNES, 2011, VI/2, pp. 87–94. *Վանից մինչև Եփրատ (հայոց պետականության ակունքներում), Հայկազուններ. առասպել և պատմություն, 2012, էջ 24–27: Առաջավոր Ասիայի շրջակա միջավայրը և Հայկական լեռնաշխարհը (վաղ և միջին բրոնզեդար), Հին Արևելք, 1 (6), 2014, էջ 144–165: Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ, Բանբեր հայագիտության, հայագիտական միջազգային հանդես, Երևան, 2014, 1(4), էջ 5–25:* To the East of Hatti. - In: Essays in Honour of Veli Sevin. A Life Immensed in Archaeology (ed.A.Özfirat), Istanbul, 2014, p. 277–282. Rulers of Hayasa. Hukkana, When the Gods Leave People (The climatological hypothesis of the collapse of the Urartian state), in: Kosyan Aram, Grekyan Yervand, Bobokhyan Arsen (eds.), The Black & the White. Studies on History, Archaeology, Mythology and Philology in Honor of Armen Petrosyan in Occasion of His 65th Birthday, AJNES Vol. VIII, Issues 1–2, 2013 [2014], Yerevan, pp. 128–134. Les Aryens au Pahhuwa, “Societas Anatolica. Bulletin”, N. 3, 2015, pp. 53–63. Between Euphrates and Lake Van (on the Location of Hayasa and Azzi), Cambridge, “International Symposium”, vol. I, 2015, pp. 271–276. *Հայասայի արքաները, Երևան, Բանբեր Հայագիտության, N 1(10), 2016, էջ 95–124:* A Note on Hittite Toponymy: the Case of Pittiyariga, Oxford, “Papers dedicated to the 65th birthday of Gregory Areshyan”, pp. 251–254. *Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրներում (աղբյուրների տեսություն), ՄՄԱԵԺ, N XXXI, Երևան, 2018, էջ 11–18:* The plain of Erznka in the II–I millenniums BC, “Fundamental Armenology”, Yerevan, N I, 2018, pp. 49–68. *Եփրատյան կոնտակտային գոտու հյուսիսային դարպասը. Երզնկայի դաշտը, Երևան, Պատմամշակութային ժառանգություն, N IV, 2018, էջ 214–235:* First Haykides and the «House of Torgom» (an overview of tradition and new prospects), Yerevan, “Fundamental Armenology”, N 2(10), 2019, pp. 46–62. Upper Euphrates Political Geography Reconsidered, Oxford, “Over the Mountains and and Far Away. Studies in Near Eastern History and Archaeology Presented to Mirjo Salvini on the Occasion of his 80th Birthday”, Oxford, Archaeopress Archaeology, 2019, pp. 312–316. Евфратская контактная зона во II тысячелетии до н.э. (на примере Исувы), *ՄՄԱԵԺ, N XXXIII(1), Երևան, 2020, с. 95–110. Բնակլիմայական իրավիճակը Հայկական լեռնաշխարհում վաղ հոլոցենում, ՄՄԱԵԺ, N XXXIII(2), Երևան, 2020, էջ 56–73:* Ecology and civilization of the Armenian highland, Yerevan, “Fundamental Armenology”, N 1, 2020, pp. 23–38 *և այլն:*

(ըստ խեթական սեպագիր աղբյուրների)» մենագրությունը[2]: Հանդիսանալով հայտնի արևելագետներ Վ. Իվանովի, Ի. Դյակոնովի աշակերտը՝ նա իր փորձն ու գիտելիքները անմնացորդ փոխանցել է և շարունակում է փոխանցել երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին, որոնք (Ռ. Ղազարյան, Ռ. Ցականյան, Հ. Հմայակյան, Մ. Խանզադյան, Լ. Պետրոսյան, և այլք) Արամ Քոսյանի խեթագիտական և սեպագրագիտական դպրոցի ներկայացուցիչներն են:

Հարկ է նշել, որ աշխատանքները Հայաստանի և հարակից երկրների պատմության համար առանցքային նշանակություն ունեցող խեթական սկզբնաղբյուրների ուսումնասիրման ուղղությամբ շարունակական բնույթ են կրում: Բացի ամենամյա հրատարակություններից՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի աշխատակիցները Արամ Քոսյանի գլխավորությամբ նախաձեռնել են մի կարևոր գործ ևս՝ «Խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին» շարքը[3]:

Առանձնահատուկ պետք է նշել նաև, որ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը 2013 թ. գիտական հանրությանը ներկայացրեց կարևորագույն մի աշխատություն՝ «Հայաստանի հարակից երկրների պատմություն» քառահատորյակի առաջին հատորը (պատասխանատու խմբագիր Ա. Քոսյան): Նրա հեղինակությամբ, հատորի մեջ առանձին գլուխներով՝ ժամանակակից խեթագիտության ձեռքբերումների հիման վրա, տրվել է նաև Փոքր

[2] Ուսումնասիրության մեջ ներկայացվում են խեթական տեքստերում վկայված բոլոր այն տեղանունները, որոնք գտնվել են ինչպես բուն Հայասայում և Իսուվայում, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի այլ շրջաններում և խեթահայասական ու խեթահիսուվական շփման գոտում: Տրվել են նոր տեղանուններ, որոնք ի հայտ են եկել նոր սկզբնաղբյուրների ուսումնասիրման արդյունքում: Ճշգրտվել են նաև հայտնի տեղանունների մի մասի ընթերցումները և դրանց առնչակցությունը Հայասային և Իսուվային (տես՝ Գրեկյան Ե., Արամ Քոսյան. Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, 168 էջ (գրախոսություն), ՊԲՀ, 2005, 3, էջ 270–272):

[3] Քոսյան Ա., Ղազարյան Ռ., Խանզադյան Մ., Մարտիրոսյան Ս., Մ.թ.ա. XIV դարի խեթա-հայասական մեջպետական պայմանագրերը: Խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին, հատոր I, Երևան, 2016, Զանգակ հրատ., 175 էջ: Մ.թ.ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին: Խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին, հատոր II, Երևան, Գիտություն հրատ., 183 էջ: Մ.թ.ա. XIV դ. խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ (Մուրսիլիս II-ի տեքստերը): Խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին, հատոր III, Երևան, 2021, 190 էջ:

Ասիայի հին շրջանի, Խեթական տերության, Լուվիական պետությունների պատմություն:

Վերոհիշյալ բազմաբեղուն գործունեությունը պրոֆեսոր Արամ Քոսյանը զուգակցել է գիտակազմակերպական, գիտախմբագրական և մանկավարժական գործունեությանը[4]:

Նա հանդիսանում է մի շարք գիտական ժողովածուների խմբագրական խորհրդի անդամ կամ գլխավոր խմբագիր («Արամազդ», «Բանբեր արևելա-

[4] Նրա համահեղինակությամբ են հրատարակվել մի շարք բուհական և դպրոցական դասագրքեր և ձեռնարկներ, օրինակ՝ Հին աշխարհի պատմություն: Դասագիրք 5-րդ դասարանի համար / Ա. Քոսյան, Ա. Խաչիկյան: ՀՀ Կրթ. և գիտ. նախ., Երևան, 2000: Հին աշխարհի և միջին դարերի պատմություն: V–VI դաս.: Մեթոդ. ձեռն. ուսուցիչների համար / Հեղ. դարձերեսին՝ Վ.Ա. Դիլոյան, Ա.Վ. Քոսյան, Ա.Է. Խաչիկյան և ուրիշն., Երևան, 2000: Պատմություն: Դասագիրք հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանի համար /Վ.Բ. Բարխուդարյան, Բ.Հ. Հարությունյան, Պ.Ս. Ավետիսյան, Քոսյան Ա.Վ. և ուրիշն., Երևան, 2001: Հայոց եկեղեցու պատմություն: Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք / Ա. Քոսյան, Վ. Պետրոսյան, Ա. Գյուլբուդաղյան, Վ. Ղանդիլյան: Խմբ.՝ Պ.Հ. Հովհաննիսյան, Ա. եպս. Մկրտչյան և ուրիշն.: ՀՀ Կրթ. և գիտ. նախ., Երևան, 2004: Համաշխարհային պատմություն 10: Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր, խմբ. կազմ Ա.Քոսյան, Ե.Գրեկյան,Գ.Հարությունյան և ուրիշն., Երևան, 2009: Համաշխար-հային պատմություն: 10-րդ դասարան: Հումանիտար հոսք /Ա.Քոսյան, Ե. Գրեկյան,Գ. Հարությունյան: Մեթոդ. մասի հեղ.՝ Ա. Սարգսյան: ՀՀ ԿԳՆ, Երևան, 2009: Համաշխարհային պատմություն 12: Հումանիտար հոսք / Վ. Պետրոսյան, Ա. Նազարյան, Ռ. Սաֆրաստյան; խմբ.՝ Ա. Քոսյան և Ա. Նազարյան, Երևան, 2011: Համաշխարհային պատմություն 12: Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսք / Ա. Նազարյան, Վ. Պետրոսյան, Ռ. Սաֆրաստյան; Խմբ.՝ Ա. Քոսյան և Ա. Նազարյան, Երևան, 2011: Համաշխարհային պատմություն: Հին աշխարհ: 6-րդ դաս.: Դասագիրք հանրակրթ. հիմն. դպր. համար / Ա.Ա. Ստեփանյան, Հ. Ավետիսյան, Ա. Քոսյան., Երևան, 2013: Քոսյան Ա.Վ., Գրեկյան Ե.Հ., Սաֆրաստյան Ռ.Ա., Համաշխարհային պատմություն. ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր (10-րդ դասարանի դասագիրք), Ե., «Զանգակ» հրատ., 2017, 192 էջ: Քոսյան Ա.Վ., Գրեկյան Ե.Հ., Համաշխարհային պատմություն. հումանիտար հոսք (10-րդ դասարանի դասագիրք), Ե., «Զանգակ» հրատ., 2017, 224 էջ: Քոսյան Ա.Վ., Սաֆրաստյան Ռ.Ա., Համաշխարհային պատմություն. հումանիտար հոսք (11-րդ դասարանի դասագիրք), Ե., «Զանգակ» հրատ., 2017, 256 էջ: Քոսյան Ա.Վ., Սաֆրաստյան Ռ. Ա., Համաշխարհային պատմություն. Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր (11-րդ դասարանի դասագիրք), Ե., «Զանգակ» հրատ., 2017, 160 էջ: Քոսյան Ա.Վ. (գլխ. խմբագիր), Սաֆրաստյան Ռ.Ա. (համահեղինակ), Համաշխարհային պատմություն. հումանիտար հոսք (12-րդ դասարանի դասագիրք), Ե., «Զանգակ-97» հրատ., 2018, 256 էջ: Քոսյան Ա.Վ. (գլխ. խմբագիր), Սաֆրաստյան Ռ.Ա. (համահեղինակ), Համաշխարհային պատմություն. ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր (12-րդ դասարանի դասագիրք), Ե., «Զանգակ - 97» հրատ., 2018, 128 էջ:

գիտության ինստիտուտի (նախկինում՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ)», «Հին Արևելք», «Հիմնարար հայագիտություն» և այլն):

Հանրագումարի բերելով՝ կարող ենք փաստել, որ մեծանուն գիտնականի բազմավաստակ գործունեության շնորհիվ խեթագիտությունը Հայաստանում արևելագիտության և սեպագրագիտության կայացած ուղղություններից մեկն է: Այն դեպի ապագան միտված գիտական ուղղություն է և ժամանակի ընթացքում նորանոր նյութեր կտրամադրի, որոնք նոր լույս կսփռեն Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածաշրջանների հին շրջանի պատմության, լեզվի, մշակույթի և այլ հարցերի վրա:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ողջ աշխատակազմը, շնորհավորելով պրոֆեսոր Արամ Քոսյանին՝ իր ծննդյան 65-ամյակի կապակցությամբ, ցանկանում է, որ նա իր տաղանդը և մասնագիտական հմտությունները դեռ երկար տարիներ ծառայեցնի գիտության զարգացմանը:

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ